

Ստորեւ, ամփոփ ձեւով պիտի ներկայացուին 19-րդ դարուն յայտնուած փիլիսոփայութեան նոր դպրոցներն ու ուղղութիւնները.-

## 1. ՀԵԳԷԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հեգելի մահէն ետք (1831 թ.), անոր աշակերտները բաժնուեցան երկու խումբերու: Անոնցմէ մէկ քանին, շարունակեցին իրենց ուսուցչի գաղափարապաշտ ուղին եւ անոր կրօնի փիլիսոփայութիւնը ու կոչուեցան՝ *«հին կամ աջ հեգելականներ»*։ Իսկ շատեր գլխաւորեցին հակաշարժում մը՝ ընդդէմ ընդհանրապէս գաղափարապաշտութեան եւ մասնաւորաբար հեգելականութեան ու Հեգելի կրօնի փիլիսոփայութեան եւ կոչուեցան՝ *«երիտասարդ կամ ձախ հեգելականներ»*։

Այս հակաշարժումը քննադատեց Հեգելի մանաւանդ կրօնի եւ պետութեան փիլիսոփայութիւնը եւ որդեգրեց հակակրօնական, մինչեւ անաստուածական (Atheism) եւ քաղաքական-ազատական (Liberalism) դիրքեր։

*«Երիտասարդ կամ ձախ հեգելականներ»*ու շարքին կը պատկանին, գերման փիլիսոփաներ.- **Լ. Ֆոյերբախ** (Ludwig Feuerbach, 1804 – 1872 թ.), **Դ. Ֆ. Շտրաուս** (David Friedrich Strauß, 1808 – 1874 թ.), **Բ. Բաուեր** (Bruno Bauer, 1809 – 1882 թ.), **Կ. Մարքս** (Karl Marx, 1818 – 1883 թ.) եւ **Ֆ. Էնգելս** (Friedrich Engels, 1820 – 1895 թ.):

Հակաշարժումի գլխաւոր դէմքերէն **Դ. Ֆ. Շտրաուս**, 1835 թուականին կը հրատարակէր *«Յիսուսի կեանքը»* (գերմ. Բնագիր՝ „Das Leben Jesu“) երկ-հատորեայ քննադատական երկը, ուր համաստուածեան (Pantheism) գաղափարներ կը տիրէին. ասիկա պատճառ կը հանդիսանար Հեգելականութեան երկփեղկման։

Հակաշարժումի գլխաւոր դէմքերէն **Կ. Մարքս**, ինչպէս պիտի տեսնենք, հետագային պիտի ունենար իր անունով կոչուած նոր ուղղութիւն մը։

Իսկ *«հին կամ աջ հեգելականներ»*ու շարքին կարելի է յիշել՝ գրող **Կ. Ֆ. Գեօշէլ** (Carl Friedrich Göschel, 1781 – 1861 թ.) եւ փիլիսոփայ **Գ. Ա. Գաբլեր** (Georg Andreas Gabler, 1786 – 1853 թ.):

## 2. ՄԱՐՔՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Մարքսիզմ)

Երիտասարդ կամ ձախ հեգելական Մարքս, ո՛չ միայն մասնակից էր 19-րդ դարու ընդդէմ գաղափարապաշտութեան (Idealism) շարժումին, այլ մշակած է իւրայատուկ փիլիսոփայական ուղղութիւն մը, որ *նիւթապաշտական* (Materialism) է։ Մարքս կը զարգացնէ «ենթակայ-առարկայ-յարաբերութեան» փոփոխութիւն մը. մինչ նախապէս առարկայի որոշումը կը կատարուէր ենթակային կողմէ, Մարքսի համաձայն՝ ենթակայի որոշումն է, որ կը կատարուի առարկային կողմէ, այսինքն՝ «նիւթ»ն է, որ կ'որոշէ անհատի գիտակցութիւնը։ Այս իմաստով, ճշմարտութիւնը համաձայնութիւնն է անհատի մտածողութեան եւ այդ նիւթի կամ առարկայի։